


Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)

10-րդ դասարան

1. Ի՞նչ կապ կա երկրակեղևի հզորության և խտության միջև:
Ի՞նչ են Կոնրադի և Մոխոյի մակերևույթները.....1,5 միավոր
2. Որոշել Չինաստանի զբաղեցրած մակերեսը 1 : 20 000 000
մասշտաբի քարտեզի վրա (պատասխանը ստանալ լուծելով)..... 1 միավոր
3. Ի՞նչ են իսկական կամ աշխարհագրական ազիմուտը և մագնիսական
հակումը: Քանի՞ տիպի է լինում մագնիսական հակումը և ինչպե՞ս
են որոշում (գրել բանաձևերը)..... 2 միավոր
4. Բնական և հասարակական աշխարհագրություններից յուրաքանչյուրը
բաժանվում է ճյուղային և համալիրային գիտությունների: Նրանց համատեղ
զարգացման արդյունքում ձևավորվել են նաև միասնական
գիտություններ: Թվարկե՛լ դրանցից առնվազն չորսը.....1 միավոր
5. Ի՞նչ եղանակներով է իրականացվում դաշտային հետազոտության
մեթոդը: Դաշտային հետազոտության աշխատանքներն ի՞նչ
փուլերով են կատարվում (թվարկել առանց մեկնաբանության).....1,5 միավոր
6. Տրված պետություններից դուրս գրել անցումային տնտեսություն
ունեցող երկրները.....2 միավոր
Ֆինլանդիա, Լեհաստան, Թուրքիա, Ուզբեկստան, Թաիլանդ, Մոնղոլիա,
Հորդանան, Եգիպտոս, Բուլղարիա, Ուրուգվայ, Մեքսիկա, Աֆղանստան,
Կուբա, Հայաստան, Վիետնամ, Բելառուս:
7. Ջարգացող երկրների մեջ առաջատար են առանցքային երկրները:
Ո՞ր երկրներն են մտնում այդ ենթախմբի մեջ և ինչու՞ են կոչվում
առանցքային.....1 միավոր
8. Հայաստանի Հանրապետության մետաղաձուլության վերաբերյալ
տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Սոթքում և Մեղրաձորում գործում են ոսկու կորզման ֆաբրիկաներ:
 2. Ալյումինի արտադրությունն ունի ավարտուն տեխնոլոգիական ցիկլ:
 3. Ճյուղն ունի հարուստ հումքային բազա:
 4. Մետաղաձուլության ձեռնարկությունները տեղաբաշխված են
հումքի աղբյուրների մոտ:
 5. «Մանես – վալեքս» -ը պղնձաձուլության, սև պղնձի արտադրության
խոշոր ձեռնարկություն է:
 6. Գունավոր մետաղաձուլության համալիրը ՀՀ տնտեսության
կառուցվածքում ունի առաջատար դիրք:
9. Ի՞նչ են կոչվում տրված գրաֆիկները և ի՞նչ են ցույց տալիս:
Ա բնակավայրը կլիմայական ո՞ր գոտու, ո՞ր մարզում է գտնվում:
Բ բնակավայրը կլիմայական ո՞ր գոտում է գտնվում.....1,5 միավոր



10. ՀՀ տարածքը գտնվում է արլ. ե. $43^{\circ} 27'$ - ի և արլ. ե. $46^{\circ} 37'$ միջօրեականների միջև: Որոշել այդ կետերի միջև տեղական ժամանակի տարբերությունը (նշել ժամը և րոպեն)..... 1 միավոր
11. Ի՞նչ կլիմի , եթե ՀՀ տարածքում օդի ջերմաստիճանը բարձրանա $2-3^{\circ}$ -ով, իսկ մթնոլորտային տեղումների քանակը նվազի 15 – 20 % -ով (գրել առնվազն չորս հետևանք)..... 1 միավոր
12. Եվրասիայի $30 - 45^{\circ}$ աշխարհագրական լայնություններում 10 մլն տարի առաջ ընթանում էին լեռնակազմական ակտիվ պրոցեսներ.....2 միավոր
 ա) որոշել երկրաբանական դարաշրջանը, ժամանակաշրջանը, ծայրավորությունը և գեոսինկլինալային գոտին,
 բ) հրաբխականության հետևանքով ի՞նչ ապարատեսակներ են առաջացել (թվարկել ութը):
13. Ո՞րն է ակտիվ և պասսիվ առևտրային հաշվեկշռի տարբերությունը.....1 միավոր
14. Թվարկել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մեջ մտնող երկրները և նրանց մայրաքաղաքները.....2 միավոր

Պատասխաններ
2019թ. հանրապետական փուլի
 / գնահատման քայլը – 0,25 և 0,5 միավոր /

10 – րդ դասարան

1. Երկրակեղևի հզորությունը հակադարձ համեմատական է նրա խտությանը: Մեծ խտություն ունեցող օվկիանոսային երկրակեղևը բարակ է, իսկ համեմատաբար փոքր խտություն ունեցող ցամաքային երկրակեղևը՝ հաստ: Հետևաբար, օվկիանոսային և ցամաքային երկրակեղևները համարյա նույն ուժով են ազդում միջնապատյանի վրա:
 Ցամաքային տիպի երկրակեղևում, գրանիտային և բազալտային շերտերի միջև, գտնվում է Կոնրադի մակերևույթը, իսկ բազալտային շերտի և թույլլորտի միջև՝ Մոխտյի (Մոխորովիչիչի) մակերևույթը:
2. Չինաստանի տարածքը $9\ 600\ 000$ կմ² է: Քարտեզի 1 սմ – ին համապատասխանում է 200 կմ, իսկ 1 սմ² –ին՝ $200 \times 200 = 40\ 000$ կմ²: Հետևաբար, $9\ 600\ 000$ կմ²: $40\ 000$ կմ²/սմ² = 240 սմ²:

3. Իսկական կամ աշխարհագրական ազիմուտը դիտման կետը նպատակակետին միացնող գծի և աշխարհագրական միջօրեականի միջև ընկած անկյունն է:
 Այն անկյունը, որն ընկած է մագնիսական և աշխարհագրական միջօրեականների միջև, կոչվում է մագնիսական հակում: Հակումը լինում է արևելյան (աջ կամ դրական), և արևմտյան (ձախ կամ բացասական):
 Եթե հակումն արևելյան է, ապա իսկական ազիմուտը($U_{\text{ի}}$) հավասար է մագնիսական ազիմուտին ($U_{\text{մ}}$) գումարած մագնիսական հակումը (a)՝ $U_{\text{ի}} = U_{\text{մ}} + a$:
 Եթե հակումն արևմտյան է, ապա՝ $U_{\text{ի}} = U_{\text{մ}} - a$
 Եթե հակումը 0 է, ապա՝ $U_{\text{ի}} = U_{\text{մ}}$:
4. Միասնական գիտություններից են՝ երկրաբնապահպանությունը (գեոէկոլոգիա), ռեսուրսագիտությունը, ռեկրեացիոն աշխարհագրությունը, բժշկական աշխարհագրությունը (ճիշտ համարել նաև ռազմական աշխարհագրությունը, պատմական աշխարհագրությունը, տարածաշրջանային աշխարհագրությունը և այլն):
5. Դաշտային հետազոտության եղանակներն են՝ ա) անշարժ (ստացիոնար), բ) կիսաանշարժ և գ) երթուղային: Դաշտային հետազոտությունները կատարվում են հետևյալ փուլերով՝
 1) նախապատրաստական, 2) բուն դաշտային և 3) հետդաշտային կամ ավարտական:
6. Լեհաստան, Ուզբեկստան, Մոնղոլիա, Բուլղարիա, Կուբա, Հայաստան, Վիետնամ, Բելառուս:
7. Զարգացող երկրների մեջ առաջատար են այսպես կոչված առանցքային երկրները՝ Չինաստանը, Հնդկաստանը և Մեքսիկան: Առանցքային են կոչվում, որովհետև տիրապետում են բնական, տնտեսական և մարդկային հսկայական ներուժի և շատ ցուցանիշներով առաջատար են զարգացող երկրների մեջ: Սակայն ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով զգալիորեն փոքր է, քան զարգացած երկրներում:
8. 1. սխալ է, 2. սխալ է, 3. ճիշտ է, 4. ճիշտ է, 5. ճիշտ է, 6. ճիշտ է
9. Տրված գրաֆիկները կոչվում են կլիմագրամներ, որոնցում պատկերված են օդի ջերմաստիճանի (ձախից) և մթնոլորտային տեղումների (աջից) տարեկան ընթացքը:
 Ա բնակավայրը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու միջերկրածովային մարզում (ձմեռը խոնավ և մեղմ, ամառը՝ չոր և շոգ):
 Բ բնակավայրը գտնվում է մերձարկտիկական գոտում (ամառը խոնավ և զով, ձմեռը՝ չոր և ցուրտ):
10. Երկու կետերն իրարից հեռու են $3^{\circ} 10'$ -ով:
 15° ճանապարհին Երկիրն անցնում է 1 ժամում կամ 60 րոպեում
 1° -ը անցնում է 4 րոպեում
 3° -ը----- 12 րոպեում
 $10'$ - ն ----- 40 վայրկյանում
 Հետևաբար, ՀՀ -ի արևմտյան և արևելյան ծայրակետերի միջև տեղական ժամանակի տարբերությունը կլինի 12 րոպե 40 վայրկյան:
11. ՀՀ -ում կլիման կդառնա ավելի չոր և շոգ, հետևաբար՝
 1. կկրճատվեն անտառային զանգվածների տարածքները,
 2. կընդլայնվեն անապատային և կիսաանապատային տարածքները,
 3. լանդշաֆտային և կլիմայական գոտիները կբարձրանան վեր,
 4. կմեծանա գոլորշիացումը, կնվազեն ջրային ռեսուրսները,
 5. կխախտվեն գյուղատնտեսական գոտիները,
 6. կվատանա ջրամատակարարումը և այլն:

12. ա) Կայնոզոյան դարաշրջան, նեոգենի ժամանակաշրջան, ալպյան ծալքավորություն, Ալպ-Հիմալայան
գեոսինկլինային գոտի,
բ) հրաբխային (մագմատիկ) ապարատեսակներ՝ բազալտ, տուֆ, պեմզա, պեռլիտ, խարամ, անդեզիտ,
օբսիդիան, գրանիտ և այլն:
13. Առևտրային հաշվեկշռի սալդոն համարվում է դրական, եթե արտահանման արժեքը գերազանցում է ներմուծման արժեքին, իսկ պասսիվ, եթե ներմուծման արժեքը գերազանցում է արտահանման արժեքին:
14. Անգլիա – Լոնդոն, Շոտլանդիա – Էդինբուրգ, Ուելս – Քարդիֆ, Հյուսիսային Իռլանդիա կամ Օլսթեր – Բելֆաստ:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան